Հավելված թիվ 2՝
ՀՀ փաստաբանների պալատի նախագահի
01.02.2023թ. թիվ 34-Լ որոշման

ՊԱՀԱՆՋ
(կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ ներկայացնելու մասին)

«26»12.2023թ. Կարգապահական գործ № ԿԳ-23100

Փաստաբան՝ Լուսինե Մկրտչյանին
Հասցե՝ ք. Երևան, Արշակունյաց 9

Տեղեկացնում ենք Ձեզ, որ Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի **(այսուհետ՝ Պալատ)** նախագահի 23.11.2023թ. թիվ 347-Ա/ԿԳ-23100 որոշմամբ փաստաբան Լուսինե Մկրտչյանի **(այսուհետ՝ Պատասխանող)** նկատմամբ հարուցվել է կարգապահական վարույթ՝ «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշներով:

Կարգապահական վարույթի օրինականությունն ապահովելու և արդարացի լուծման համար նշանակություն ունեցող հանգամանքները բացահայտելու նպատակով՝ առաջարկվում է ***սույն գրությունը ստանալու պահից մեկշաբաթյա ժամկետում ներկայացնել*** կարգապահական վարույթի համար անհրաժեշտ ապացույցներ:

Մասնավորապես, սույն գործի շրջանակներում անհրաժեշտ է ապացուցել փաստաբան Լուսինե Մկրտչյանի վարքագծում «Փաստաբանության մասին» օրենքի և Փաստաբանի վարքագծի կանոնագրքի պահանջների խախտման հատկանիշների առկայության կամ բացակայության հանգամանքը: Այդ իսկ նպատակով, պահանջվում են հետևյալ ապացույցները՝

- Լուսինե Մկրտչյանի և Սպարտակ Հովհաննիսյանի միջև կնքված պայմանագրի պատճենը,
- ստանձնած պարտավորությունների կատարման վերաբերյալ ապացույցներ,
- ստանձնած պարտավորությունները՝ արագ և արդյունավետ կատարելու վերաբերյալ ապացույցներ,
- փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված լինելու վերաբերյալ ապացույցներ (առկայության դեպքում),
- փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված լինելու դեպքում պայմանագրով ստացած հոնորարի այն մասը, որի դիմաց փաստացի աշխատանք չի կատարվել Դիմողին վերադարձված լինելու վերաբերյալ ապացույցներ,
- փաստաբանական ծառայությունների մատուցման պայմանագիրը լուծված լինելու դեպքում հանձնարարության կատարման ընթացքում ձեռք բերված

փաստաթղթերը Դիմողին վերադարձված լինելու վերաբերյալ ապացույցներ,

- հանձնարարության կատարման ընթացքի մասին Դիմողին կանոնավորապես տեղեկացնելու և նրան հետաքրքրող հարցերին պատասխանելու վերաբերյալ ապացույցներ,
- «Փաստաբանության մասին» օրենքի 19-րդ հոդվածի 1-ին և 2-րդ կետերի, ինչպես նաև Կանոնագրքի 2.7.2, 3.5.5, 3.6.1 և 3.8.4 ենթակետերի խախտման հատկանիշների բացակայությունը հիմնավորող այլ գրավոր ապացույցներ:

Ծանուցում՝ «Փաստաբանության մասին» օրենքի համաձայն՝ *սահմանված ժամկետում պահանջված ապացույցը չներկայացնելը կարող է մեկնաբանվել ի վնաս պահանջի հասցեատիրոջ, եթե ապացուցման ենթակա փաստը, որի վերաբերյալ անհրաժեշտ էր պահանջվող ապացույցը, մնում է չապացուցված:*

Կից՝ *Կողմերի իրավունքների պարզաբանման թերթիկի պատճենը:*

ՀՀ փաստաբանների պալատի
աշխատակազմի սպասարկող
անձնակազմի աշխատակից՝ _____Գարիկ Հախնազարյան

Կողմերի իրավունքների պարզաբանման թերթիկ

«Փաստաբանության մասին» օրենքի 39.4. հոդվածի համաձայն՝

1. Փաստաբանը և հաղորդում (դիմում, տեղեկանք, միջնորդություն) ներկայացրած անձը (մարմինը) սույն օրենքով սահմանված կարգով հավասար իրավունք ունեն՝

1) մասնակցելու կարգապահական վարույթի բոլոր փուլերին ինչպես անձամբ, այնպես էլ ներկայացուցչի միջոցով.

2) կարգապահական վարույթի հարուցման պահից ծանոթանալու կարգապահական գործի բոլոր նյութերին, դրանցից պատճեններ հանելու և գործից
դուրս գրելու ցանկացած ծավալի որևէ տեղեկություն.

3) տալու բացատրություններ կամ հրաժարվելու բացատրություններ տալուց.

4) ներկայացնելու ապացույցներ կարգապահական գործին կցելու և հետազոտելու համար.

5) հայտնելու բացարկներ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի կամ խորհրդի անդամներին և սույն օրենքի 39.5-րդ հոդվածի 1-ին մասի իմաստով սպասարկող անձնակազմի աշխատակցին.

6) հարուցելու միջնորդություններ.

7) հրավիրելու վկաներ, հարցեր տալու ինչպես իր, այնպես էլ մյուս կողմի կամ փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի հրավիրած վկաներին.

8) հարցեր տալու ելույթ ունեցողին.

9) հանդես գալու եզրափակիչ ելույթով.

10) ստանալու փաստաբանների կարգապահական հանձնաժողովի և փաստաբանների պալատի խորհրդի որոշումները.

11) փաստաբանների պալատի կարգապահական հանձնաժողովի որոշումը բողոքարկելու փաստաբանների պալատի խորհուրդ կամ դատական կարգով, իսկ փաստաբանների պալատի խորհրդի որոշումը՝ դատական կարգով: